Զ. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1903 — Թ. 556

ԳԻՆԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ	համար
Տարեկան	12 Ֆր.
Վեցամսեայ	6 »
Արտասահմանի	
համար տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »
Ամերիկայի	համար
Տարեկան	3 տլր.
Վեցամսեայ	1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ։ Վերջին երեսի համար 20 սանթիմ է։ Երեքին աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կը լայ։

Վաճառքի համար ձեռքի 10 սանթիմ

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱԲԱԹ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ և դրամ դրկել խմբագրութեան հասցէին։

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Varna (Bulgarie)

Արտասահմանի համար ձեռքի)(20 ՍԱՆԹԻՄ)(

Պուլկարիոյ համար ձեռքի ⌆ 15 ՍԱՆԹԻՄ)(

—o—

Գրութիւնք հաս չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԼՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ԱՐԵԱՆ ԱՆԷԾՔԸ

Տաճկահայի կեանքը շարունակում է իր կսկծեցուցիչ, ծանր ու յուսահատական դրութիւնը. իրականութիւնը մնում է ինչքան դառն ու ցաւալի, այնքան էլ անփոփոխ։ Իսկ ամենասխուր փաստն այն է, որ յոյս էլ չկայ մօտ ապագայում եւ առանց վիթխարի կորուստների վերջ տրուի այդ արիւնոտ իրականութեան։ Թուրքիոյ լծի տակ հեծող բոլոր քրիստոնեայ ժողովուրդները տնքում են ցաւից ու անտանելի կարգերից, մանաւանդ նրանք, որոնց կրծքում զարթնել է ազատամրութեան գաղափարը. կայծը ընկել է եւ անռելի չափերով յառաջ է գնում, ծաւալ է ստանում։

Մակեդոնիայում, ուր տայտի ինքնաճանաչութեան, իրերի գիտակցութեան ուժը ամենապայծառ ցոլքերով է պարզվում, չը նայած ազատամքների գերմարդկային, պատմական քաջագործութիւններին՝ արիւնը էլի հոսում է անսպառ հեղեղի պէս, ողողելով ամիւն ու աւերակ դարձած անթիւ աւաններ։ ահագին չըրջաններ, որոնք դեռ մի քանի ամիսներ առաջ անմեղ զոհերի կեանքով էին եռ գալիս։ Ազատամրական խմբերը կրակ են թափում, հակայական ուժ են ցոյց տալիս եւ երբով ու ոգեւորութեամբ են դիմադրում թուրքերի բանակներին. իսկ վերջինները գրեթէ խուսափում են ճակատաբաց մարտի մտնելու անհամեմատ փոքրաքանակ ազատամրների հետ, անարգ միջոցների են դիմում, պարտիզանական կռիւ են տանում նրանց դէմ, իսկ կոտորվողը անզէն ամբոխն է, անմեղ կիներն ու մանուկները, դողդոջուն, ուժասպառ ծերերը։

Եւրոպական միջամտութիւնը, որի վրայ ա՛յնքան յոյսեր էին տածում մակեդոնացիները՝ ուշանում է. չէ հասնում. ակնկալութիւնները ծանր-ծանր փչանում են, յոյսերը կտրվում, իսկ արիւնը գոռում է, հոսում... Եւրոպական մեծ կամ փոքր պետութիւններից չը կայ մէկը, որ չը հետաքրքրուի արեւելքի գործերով, չունենայ Թուրքիոյ կեանքի եւ մահուան հետ կապված զանազան շահեր, սակայն զգալով իսկ այդ մոտալուտ մահուան անխուսափելի լինելը, ոչ ոք ձեռք չի մեկնում նրան՝, այդ մահը արագացնելու, ոչ ոք չի ձեռնարկում դրական գործի։ Եւրոպական ուժերը թէեւ լարված մնում են քարացած, անշարժ, սակայն հորիզոնի վրայ երեւում են թուխ, սեւ ու մռայլված ամպեր, որոնք ահեռում են մի ուժգին փոթորիկ, որը վաղ կամ անագան պայթելու է Թուրքիոյ դլխին։ Այսքան արիւնը չէ՞որ արդիւնք են պահանջում, վրէժ են աղաղակում։ Ով քիչ-շատ հետաքրքրվում ի ներկայով եւ տեղեակ է անցեալին, նա համոզված պէտք է լինի սրանում, համոզված է լինելու, թէ փոթորիկ է պայթելու։ Բայց ե՞րբ։—Աստուած գիտէ։ Մեզ համար հետաքրքրական, ուշադրաւ կէտը այն է, թէ ովքեր պէտք է օգտուվեն այդ փոթորկից եւ ովքեր կարող են օգտվել։ Պարզ է թէ կօգտվեն նրանք։ որոնք ուզում են օգտվել եւ պատրաստել են այն միջոցները, որոնք անպայման անհրաժեշտ են փոթորկի ժամանակ խրոխտ ու կանգուն մնալու։

Փոթորիկը, ահի շնչով պէտք է անցնի տաճկահայի գլխով։ Սա փիլիսոփայութիւն չէ. սա այն դրամայի իրական վերջն է, որի սկիզբը դրվել է սրանից տասնեակ տարիներ առաջ, աւելի պայծ եւ որոշ գծերով արտայայտվել 94–96ի սարսափներով ու կոտորածներով եւ որ այսօր էլ շարունակվում է հայրենիքում։

Բնութիւնը իսկայան մարդկանց սրտին յատկացրել է մի տարրական զգացմունք, որին կոչում են մարդասիրութիւն։ Այժմ, ժամանակները մի մեծ եւ հակայական պահանջ են ստեղծել ընդհանուր հայ ժողովրդի համար, եւ նրա այն զաւակները, անդամները, որոնք իրապէս մարդիկ են, ունեն մարդկային այդ տարրական զգացումը, նրանք զգում են եւ պէտք է զգան, գիտնան այդ պահանջը։

Այդ պահանջը եռանդոդ, կենդանի գործն է, որ հայ ժողովրդի բոլոր խաւերի, բոլոր դասակարգերի վրայ միօրինակ կերպով է ծանրանում։ Մակեդոնացիների ներկայ դրութիւնը, ինչպէս նաեւ հայկական բոլոր կոտորածներն ու սարսափները հաստատեցին, ապացուցին, թէ աւելի շատ կոտորվում, հալածվում եւ փչանում է այն չրջանը, որը զուրկ է ինքնապաշտպանութեան միջոցներից։ Ջարդի սրին զոհ է գնում գրեթէ միայն անզէն ու թոյլ տարրը։ Ուրեմն կարելի է երեւակայել, թէ ինչքան ուժի պէտք ունի այսօր Տաճկահայաստանը, որչափ մեծ է զէնքի եւ աշխատանքի պահանջը։ Գոյութեան միակ միջոցը այժմ դա է եւ յառաջիկային էլ դա է լինելու փրկութեան միջոցը։ Սակայն խընդիրը դրանում է, թէ որքան գործնական հողի վրայ է հաստատվում, վերածվում գաղափարը, ինչքան բաւարարութիւն է ստանում պահանջը մեզնից, արտասահմանում բնակութիւն հաստատած հայերիցս։ Հայ հարուստը արտասահմանում գրեթէ բոլորովին անդիտակից, անտարբեր է հայի տառապանքներին երկրում։ Երկրում անհուն ցաւ ու տառապանք են թագաւորում։ իսկ արտասահմանի հայ հարուստների բոլոր շրջանակներում ընդհանուր կօնցերտ, համակ խնճոյք ու խրախճանք է սիրում։ Այնտեղ արտասուք ու արիւն է հոսում,—այստեղ շամպայնի գինի ու հեշտանք։ Հայ հարուստը իր միլիոններից իր հոգու դնով կոպեկներ է տալիս, կամ աւելի ճիշդը, կորզում են նրանից։ Իսկ նիւթական միջոցների նշանակութիւնը անչափ մեծ է յեղափոխական հանգամանքներում։

Հայ երիտասարդութիւնը, իրրեւ այժ յեղափոխական տեսակէտից, կորչում, փչանում է ամեն տեսակ իր ցոփ ու շռայլ կեանքով արտասահմանեան ազատ մթնոլորտում, ուր վեհն ու բարին, վատն ու ախտը միմեանց հետ կողք կողքի են քալում, և մեր երիտասարդութիւնը անընդհատ իրվում է այս վերջիններների մէջ. իր անհատական ու ըզգայնական հաճոյքներին անձնատուր։ Եւ սակայն ինչ՞ դեր է ընկնում նրան. անհաւասար մարտում. նրան ոչ ոք, ոչ մի ոյժ չի կարող փոխարինել. նա պէտք է լինի մեր ամենաուժեղ յենարանը։ Նոյն չափ, գուցէ աւելի ծանր պարտք է ընկնում երիտասարդութեան այն մասին, որը զարգացած է, աւելի առատ ընդունակութիւններով ու կարողութիւններով է օժտուած, հայ ուսանողութիւնը, ինտելիգենցիան։ Նրանց գործունէութեան ասպարէզը, չնչին բացառութեամբ, արտասահմանն ու խոսքն են եղել մինչեւ այժմ, սպասնիչ իրականութիւնը կենդանի գործ անձնազոհութիւն է պահանջում։ Այդ բաւական չէ սակայն։

Արտասահմանի յառաջադէմ երկիրների ժողովուրդների և հասարակութիւնների կեանքի մէջ մեծ դեր խաղացող մի ֆակտոր կայ այժմ, որ ազդեցութիւն ունի ժողովրդային խաւերի և կարգերի վրայ։

Դա մամուլն է, որ ղեկավարի դեր է խաղում ազգերի մտային, հասարակական, քաղաքական, անտեսական եւայլն կեանքում։ Զենք զրկվել և հայերս միջազգային այդ բարիքից։

Արտասահմանի մեր ազատ մամուլը պիտի ղեկավարէ։ ուղիղ ճանապարհ ցոյց տայ մեր հանրային գործերին։ Թշուառին ամենից շատ են հեգնում։ Մեր մէջ այժմ բազմացել են «Ազգային ու Քաղաքական» թերթերը, որոնք խմբագրութեան տարրական արժանիքներից զուրկ անհատների սեփականութիւններն են և շահատակում են մամլոյ նշանակութիւնն ու նպատակը։ Դրանցից շատերը յեղափոխական պրոպագանդէն են նուիրված, իսկ շատերի էլ ճակատի տակ կը գտնէք յայտարարութիւն, որից կիմանաք, թէ թերթը «չէզոք» ու «անկողմնակալ» է, այսինքն ոչ մի յեղ. կուսակցութեան չի պատկանում, յեղ. մարմիններից խրտչում ու փախչում է հեռու, իբրեւ վտանգաւոր մարմիններից։ Նմուշներ չեն պակսում. ահաւասիկ ձեզ երեք հատ հին հնչակեան օրգաններ։ Ի՞նչ են քարոզում դրանք. որոշապէս չի կարելի ասել, բայց քարոզում են, հայ ժողովրդին տեսական բաներ են քարոզում։ Մի օր յեղափոխութիւն Տաճկահայաստանում, մի օր սոցիալիստութիւն, դասակարգային կռիւ, տնտեսական կարգերի յեղաշրջման թէօրիան. խօսք, խօսք. խօսք, և սակայն նրանք յեղափոխականներ են... Ինչքան ստորին է սա. կարծես Տաճկահայաստանում կապիտալ, պուրժուազիա, բանւոր գոյութիւն ունեցած լինէր, կարծես բռնակալ ռէժիմը չի ճնշում միահամուռ հայ տարրի վրայ։ Չէ, նրանք այդ գիտեն, գիտեն նաեւ թէ այժմ լոկ յեղափոխութիւնն է հարկաւոր, բայց ծանօթացնում են հայ ընթերցողին այդ գաղափարի հետ, որին իրանք երկրպագելու չափ են յարգում...

Ես ձեզ մի նմոյշ էլ տամ։ Ահաւասիկ ձեզ մի անհատական թերթ, որի անունը «Իրաւունք»է։ Ի՞նչն է «Իրաւունքը». մի անձնական անկախ չէզոք թերթ, որը լոկ իր հայհոյանքների տեսակներով ու քանակով կարող է պատիւ բերել իր գոյութեամբ և արտասահմանի հայութեան և՛ նրա ազատ մամուլին։ Նա չէզոք թերթ է. ազգային իրաւունքն է պաշտպանում, անխոնջ կռիւ է մը զուսա, հայհոյանք է թափում։ Ում չէ հայհոյել նա «իրաւունքի» անունով՝. և՛ Պէսոին, և՛ Դաշնակցութեան, և՛ իրաւունքի ամեն հակառակորդին։ Սակայն նա ողբալ էլ գիտէ բռնաբարած իրաւունքի(՞) համար. «ողբացեալ Ժամարեանի համար»։ Ցեղափոխական նպատակով, յեղափոխականների ձեռքով և ոչ յեղափո-

խականի մահը ոգբում է ամեն մի Թրքական թերթ. նրանց ձայնակցում է և „Իրաւունքը“. Ցաւալի չէ նրանց գոյութիւնը, այլ ցաւալի է այն՝ որ նրանց կեանքի համար հող է տալիս արտասահմանի հայութիւնը: Եւ երկրում կացութիւնը պահանջ է ստեղծել. մեծ պահանջ, որը բարձրաձայն կանչում է ճշմարիտ հայերին, մարդասիրական զգացում կրող սրտերին, գործի է հրաւիրում նրանց։

Փոխորիկը պայթելու է. նա կը սրբէ անզէն, անպաշտպաններին և չատ անմեղ արիւն կը հոսէ. այդ արեան մեղքը մեր վզին, անէծքը մեր երեսին։

Էմիլ Շղարշեանց

25 սեպտ. 1903

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մակեդոնիոյ մէջ դեռ կը տիրէ սարսափ և մահու զարշանդ։

Սկսած են հիւանդութիւններ տարածուիլ, 100,000 մարդ հոն զուրկ են այսօր կեանքի ամենատարրական պիտոյքներէն։ Գիւղացին ոչ ցանեց, ոչ քաղեց, իր ունեցածն ալ թիւրք անօթի զօրքը յափշտակեց։ Ասկէ զատ ահա՛ ձմեռը վրայ կը հասնի և չունի վրան գոց խրճիթ մը, որու մէջ կարենայ պատսպարուիլ։ Դիւղերը հրոյ մարակ դարձած են։ Սով և հիւանդութիւն կըսպառնան հիմա աբիւնաքամ ընել դժբաղդ երկիրը։ Դիրութիւնը ահաւոր է, պատասխանատուութիւնը մեծ։ Պատասխանատուութիւն, որ առաջին անգամ կը ծանրանայ Աւստրիոյ և Ռուսիոյ վրայ, քանի որ անոնք ի սկզբանէ առաջարկեցին բարեռորոգումներու ծրագիրը, այսինքն յանձն առին Մակեդոնական հարցը միանակ լուծել։ Եւ այսօր, այս ահաւոր բոպէին դուրս եկաւ, որ այդ երկու պետութիւնները միանգամայն անկարող են իրենց ստանձնած դերը զլուխ հանել։ Անցեալ անգամ յառաջ բերած էինք երկու կարելիութիւններ, որոնցմով ըստ եւրոպական մամուլի պիտի լուծուէր մակեդոնական հարցը — առաջին Միւրցշթէկի խորհրդածութիւնները, երկրորդ՝ պատերազմ Բուլգարիոյ և Թուրքիոյ միջև։ Վերջին կէտը շատ տարակուսելի կը վերցնէ. յամենայն դէպս բուլգար կառավարութիւնը ամեն ճիգ պիտի թափէ պատերազմի բաժակը հեռացնել իր գլխէն։ Իսկ մենք փորձուած Հայաստանի համար եղած ապարդիւն խորհրդակցութիւններէն, ժողովներէն մի քիչ յոռետես էինք դէպի Միւրցշթէկի կայսերական տեսակցութիւնները։

Վեհապետները որսորդական խնճոյքներէ ետ դարձած իրարու կենաց կարմիր գինու բաժակներ բարձրացուցած ատեն բարեհաճած են նաեւ որոշումներ տալ մի դժբաղդ երկրի մասին, ուր կարմիր արիւնը գետի պէս հոսեցաւ, բայց աւա՛ղ, ի՞նչ որոշումներ. —

Ահա՛ Ռուս արտաքին գործերու նախարար Լամզդորֆի Պոլիս իրենց դեսպանին ուղղած հեռագրի ամփոփումը, որ մեզ կը պարզէ շատ բան։

Ռուսիա և Աւստրիա կը պնդեն բարենորոգմանց վերաբերեալ իրենց նախկին առաջարկները՝ հակառակ յառաջ եկած դժուարութեանց։ Դժուարութիւններ յարուցին յեղափոխականները, բայց նաեւ Դրան պաշտօնեաները, որոնք պէտք եղած եռանդը ցոյց չը տուին։ Ուստի երկու պետութիւնները համաձայնեցան բարենորոգումները գործադրել տալու համար ազգու միջոցներ ձեռք առնել։ Այս մասին ցուցմունքներ դեռ կըստանանք։

Երկու պետութիւնները ապստամբութիւնը զսպելու համար Դրան իրաւունքը և պարտականութիւնը կը ճանչնան, բայց անոնք կը բողոքեն այդ միջոցին կատարուած անգթութիւններու դէմ, որոնցմէ տուժեց խաղաղ բնակչութիւնը։ Պետութիւնները դժբաղդ դէպքերու զսպելու անմիջական օգնութիւն հասցնելու պէտքը կըզգան։

Առնուելիք մարդասիրական քայլերու մասին դեռ տեղեկութիւններ կը տրուին։ Աւստրիա և Ռուսիա կը յուսան իրենց տեւողական ջանքերով խաղաղացնել դժբաղդ երկիրը և կը կարծեն որ իրենց անկողմնակալ խորհուրդները պէտք եղած տեղը անլսելի չպիտի մնան։

Անոնք որ մեծ յոյսեր կը տածէին դէպի Միւրցշթէկի տեսակցութիւնները յուսախաբ եղան։

Երկու պետութիւնները ազդու միջոցներ ձեռք պիտի առնեն բարենորոգումները գործադրել տալու համար, իսկ այդ ազդու միջոցները կը կայանան — ինչպէս Լամսդորֆի հեռագիրը կըսէ — Սուլթանի կառավարութեան «անկողմնակալ խորհուրդներ» տալու և «մարդասիրական քայլեր» առնելու մէջ։ Զկայ ոչ է խօսք եւրոպացի ընդհանուր կառավարիչ մը կարգելու մասին, բարենորոգումներու գործը պիտի մնայ Թիւրք պաշտօնեաներու ձեռքը, որոնց բարենորոգչական կարողութիւնը ամենուս յայտնի է։ Ռուսիա և Աւստրիա անընդունակ գտնուեցան իրենց ստանձնած այս խնդիրը կարգադրելու գործին մէջ։

Անգլիա այս տեսնելով վերջերս յիշատակագիր մը դրկեց երկու պետութեանց և առաջարկեց Մակեդոնիոյ հարցը լուծել եւրոպակ. բոլոր մեծ պետութիւններու միջամտութեամբ։

Մենք Մակեդոնացիներուն իբրեւ բաղդակիցներ և ջերմ համակրողներ, կը ցանկայինք, որ իրականանար Անգլիոյ այդ առաջարկը։ Այն ատեն միայն կարելի է Մակեդոնիոյ ինքնաստ մի դրական բան յուսալ։ Բայց Անգլիա ոյժ պիտի տա՞յ իր առաջարկին։ Այդ հարց մըն է. որոյ պատասխանը մօտիկ ապագան ցոյց կուտայ մեզ։

Մարզպետունի

ԲՆՈՐՈՇՈՒՄ

Ներողութիւն եմ խնդրում «Շարժումի» ընթերցողներից, որ ստիպված եմ մի անգամ եւս զբաղվել Գուրպէթեանի էութիւնովը։ Եւ այդ ոչ նրա համար որ այդ թրքական տիպը ինքնատինքեան մի բան արժէ, այլ որովհետեւ թերթ ունի իր ձեռքում և միջոց գտնելու մեր հասարակութեան միամիտ տարրին, ու իր շուրջը համախմբելու բոլոր այն ստոր տիպերին, որոնք ուրիշ երկրներում վաղուց փբթելիս պիտի լինէին բանտերում իբր ստորին կարգի յանցաւորներ։

Գուրպէթ օղլուի անձը անալիզի ենթարկած միջոցին երբէք չեմ ղեկավարվելու նրա ինձ դէմ ուղղած աղտոտ արշաւանքներով, որովհետեւ միշտ դէպի այդ մարդը նոյն արհամարանք եմ ունեցել, ինչ որ ունեմ դէպի վատ թուրք պաշտօնեան։ Նաեւ չեմ վերցնելու նրա անհատական կեանքի մանրամասնութիւնները, որոնք յար և նման են ամեն մի չւայտ թուրքի կեանքի մանրամասնութիւններին և կարող են մեծ նիւթ մատակարարել միայն Թրքական վիպասանութեան։ Գուրպէթեանին վերցնելու եմ իբրեւ հրապարակագրութեան ասպարէզում գործողի, իր վատ գործերով։ Այս նեղութիւնը, այս զզուելի գործը յանձն եմ առնում, որովհետեւ կարծում եմ թէ արդէն ժամանակը հասել է մեր մամուլի այդ արատաբեր ներկայացուցչին մի ուժեղ հարուած եւս տալու, միամիտ ամբոխին զգուշացնելու համար այն թունոտ ու վտանգաւոր սրսկումներից, որ այդ թրքական խմբագիրը սրսկում է դէս ու դէն։

Գուրպէթեանը մտաւոր պաշարված բանից բոլորովին զուրկ է։ Վարնայի մէջ կան պարզ արհեստաւորներ, որոնք գրանից աւելի լաւ խմբագիրներ կը լինէին, եթէ այդ արարածի լպիրշութիւնը ունենային. ուրեմն գլխաւոր պէնքերից մէկը, որ անհրաժեշտ է ժողովրդին գոնէ մասամբ մտաւոր ղեկավար լինելու համար, չը կայ Գուրպէթի մօտ։

Գուրպէթեանը զուրկ է ոչ է քաղաքացիական սկզբունքից։ դրա համար նրա թերթը, ազատունքը ոչ մի ուղղութիւն չունի և քամու ցրաղացի պէս ամեն կողմ դառնում է։

Գուրպէթեանը չունի ոչ է բարոյական հիմունք, դրա համար ազատունքը ներկայանում է իբր ստի, զրպարտութեան, հայհոյութեան և փողոցային բամբասանքի ամբար։

Գուրպէթեանը ղեկավարվում է միայն իր անձնական շահով։ տասը սանտիմը նրա համար աւելի մեծ նշանակութիւն ունի, քան ամբողջ հայոց ազգը։ դրա համար նա թուրքերէն թերթ հրատարակեց, ժէօն թուրքերից թուրք անունով դրամ խնդրեց, Բուլգարիայից աքսորվեց իբրեւ ուրիշի անունը կեղծող, հայհոյեց հերոս Սէրէմճեանին, Բուրգասի զէնքերի խնդիրը ժամանակից առաջ մէջ տեղ բերեց, հալածեց տոքդոր Ալթարէկեանին, որը Վարնայի հայութեան համար կատարեալ հրեշտակ էր, գովեց Դաշնակցութիւնը երբ դեռ «Շարժումը» չը կար, ու դաշնակցականներին երբ իր թերթին էին աշխատակցում, հայհոյեց երբ «Շարժումը» հիմնվեց և դաշնակցական գրողները իրանից հեռացան։

Գուրպէթեանը այնքան չահամոլ է, որ պատրաստ է ամեն սրբութիւն ծախել, եթէ միայն նրան դրամ տան։

Վարնայում ինչ որ վար տիպեր եղել են և կան բոլորը Գուրպէթեանի անձնական մտերիմ բարեկամներն են։ նա բարեկամ էր թուրք հիւպատոսի մօտ ծառայող ստորին Զիլինկիրեանին, նա մօտիկ յարաբերութիւններ ունէր մինչեւ վերջին օրերս, թերեւս այսօր էլ ունի թուրք հիւպատոսի մտերիմ և հայ թերթերը նրա համար թարգմանող Նիկողոսի հետ։ Ոչ մի պատաւոր ինտելիգէնտ մարդ այս եօթ տարվան ընթացքում մտերիմ յարաբերութեան մէջ չէ եղել Գուրպէթ օղլուի հետ։ Իդէպս վերջերս այդ Գուրպէթեանին իր բարեկամութեամբ պատուում է միայն Պ. Հմայակ Խուչպուլեանը, որի խիղճը շատ առաձգական է երեւում, ինչպէս իրեն երեսին էլ ասացինք։ Ինչպէս երեւում է Պ. Հմայակը իր քաղաքական գործունէութեան մէջ այնքան անյաջող վերջ ունեցաւ, որ վերջի վերջոյ ստիպվեց Գուրպէթեանի պէս մէկի հետ յեղափոխութեան դրօշը բռնած յառաջ ընթանալ։ կոտրվի այն յեղափոխական դրօշը որ Գուրպէթեանները պէտք է տանեն...

Ահա այսպիսի մարդ է էֆէնտի Յակոբ Գուրպէթեանը «Իրաւունքի» խմբագիրը, որը ուզում է ազգային գործերը շակել, որը ուզում է պակասութիւններ գըտնել այս կամ հանրային գործիչի մէջ, որը հայոց խմբագիր է, որը յանդգնում է յեղափոխական կազմակերպութիւններ քննադատել, և որը կախաղանի արժանի տիպ է։ Բայց մեղաւորը մի՞թէ Գուրպէթեանն է. ոչ. մեղաւորը այն ժողովուրդն է որ իր ծոցում սնուցանում է այդ տեսակ ցեցերին։

Ու քանի մեր ժողովուրդը Գուրպէթեաններ կարող է ծնել և սնուցանել, քանի մենք յեղափոխականներ ու յեղափոխական անունով մարմիններ կունենանք, որոնք Գուրպէթեանների պէտքը կունենան, մեր ժողովուրդը ոչ միայն չի ազատվի, այլ հեռագոյն աւելի կը մատնվի կորստեան վիհին։

ՎԱՐԴՈ

ՎԱՐՆԱՅԻ ԳՈՐԾԵՐ

Իբր թէ Վարնայի թաղական խորհրդից դժգոհ են, բայց այդ դժգոհութեան պատճառները որոշ կերպով մեջ տեղ չեն դրվում. ի հարկ է Գուրպէթեանի զրպարտութիւնները չեն կարող կշիռ ունենալ, որովհետեւ նրանք հայ համայնքին օգուտ բերելու համար չեն, այլ խռովութիւններ և երկպառակութիւններ յարուցանելու համար։

Եթէ թաղական խորհրդի դէմ փաստացի և լուրջ մեղադրանքներ կան, մենք առաջինը կը լինենք նրան դատապարտողը, ինչպէս եղել ենք ամեն ժամանակ, երբ ունէ ՀԱՍԱԿԱՐ լինելու բաց ենք նկատել թաղական և այլ մարմինների կողմից։

Եթէ թաղական խորհուրդը պակասութիւններ ունի, դրա առջեւը կարելի է առնել օրինաւոր կերպով. բայց ոչ թէ ապօրինի միջոցների և զրպարտութեան ու ստի դիմելով. եւ եթէ ժողովրդի գիտակից ու մաքուր մասը փաստեր ունի թաղական խորհրդին ղեղծումների մէջ մեղադրելու համար, թէ անձամբ և թէ «Շարժումով» պատրաստ ենք ժողովրդի այդ մասին աջակցելու և թաղական խորհրդի յանցանքները մէջ տեղ դնելու։ Թող տան այդ փաստերը, բայց ոչ Գուրպէթեանի զրպարտութիւնները։

Բայց եթէ ամբոխի մի մասը Գուրպէթի հնարած սուտերի վրա հիմնվելով ուզում է բաշիբոզուկութիւն անել, խռովութիւններ բարձրացնել, մեր համայնքը խաղքուխայտառակ անել, մենք բացարձակօրէն թաղականութեան կողմը կը լինենք, եւ երբէք չենք դատապարտի թաղականներին, եթէ նրանք միջոցներ ձեռք առնեն բաշիբոզուկներին սանձահարելու համար։ Աշխարհի ամենաւազատ երկրներում բաշիբոզուկներին և սրիկաներին սանձահարում են բոլոր այն միջոցներով, ինչ որ օրէնքը և պետութիւնը տրամադրում է. նոյնը իրաւունքը ունի և հայկական ոեէ ազգային մարմին։ Այն ինչ որ գործ է դրվում Զուիցերիայի, Ամերիկայի և Անգլիայի պէս ազատ երկիրներում սրիկաներին սանձահարելու համար, կարող է գործադրվել և հայերիս մէջ, առանց ոեէ արատ բերելու ազգային արժանապատուութեան. մանաւանդ երբ ազգային արժանապատուութիւնը իրենց ձեռքում միամիտներին խաբելու համար գործիք են դարձնում այն տիպերը, որոնց գոյութիւնը արդէն անպատուութիւն է հայի համար։

Անցեալ օր «Իրաւունքի» մէջ ակնարկ է եղել որ իբր թէ ես եմ ոստիկանութիւն հրաւիրել ընտրողական ժողովին, և այդ փաստվում է նրանով որ ոստիկանապետի մօտ եմ գնացել։

Այդ բոլորովին սուտ է. ես ոստիկանապետի մօտ գնացել եմ այն ժամանակ երբ ոստիկանները արդէն ուղարկված են եղել, և գնացել եմ խնդրելու որ հայ գաղթականները մասնակցեն ընտրութեան գործին, ու այդ մասին քաղաքապետից կարտ վիզիթ եմ տարել ոստիկանապետին, որը դեռ ինձ մօտ է գտնվում։

Չը նայելով դրան, ոստիկանութեան ներկայութիւնը ես չեմ դատապարտում, որովհետեւ եթէ ոստիկանութիւն չը լինէր, սրված դանակները և լցված ատրճանակները պէտք է երեւան գային և դպրոցի սենեակները ու եկեղեցու վայրը պատերազմի դաշտի վերածէին. չէ՞ որ հայերս առհասարակ իրար սպանելու մէջ մի քիչ քաջ ենք։

Թողնենք այս։ Մենք էլ դժգոհ ենք ներկայ թաղականութիւնից. և գիտէ՞ք ինչու, որովհետեւ ներկայ թաղականութիւնը մինչեւ օրս իր նախորդ թաղականութեան, հաշիւները հրապարակ չէ հանել։ Նախորդ թաղականութեան որի ջերմ պաշտպան և բարեկամն է Գուրպէթը։ Գուրպէթի այդ պաշտպանութիւնը արդէն կասկած է յարուցանում մեր մէջ, որովհետեւ նա լաւ մարդկանց բարեկամ լինել չէ կարող։

ՎԱՐԴՈ

Պատ. խմբագրութիւն
«Շարժումի» Էրզրում

Վառնա

Ամսոյս 14ին Ս. եկեղեցւոյս շրջաբակին մէջ տեղի ունեցաւ միթինկ մը, ի ներկայութեան 400 է աւելի Ազգայնոց, բողոքելու համար Ռուսիոյ մէջ եկեղեցապատական կալուածոց գրաւման դէմ։

Ներկայից միաձայն հաւանութեամբ ընդունուեցան հետեւեալ երեք որոշումները, որոնք պիտի մատուցուին Դիւանիս կողմանէ՝ առ Ն. Ս. Օծութիւն, Վեհ. Հայրապետն ամենայն հայոց։

Ա. Խստիւ կը բողոքենք Ռուսական կառավարութեան կողմանէ եղած այն անօրինութեան դէմ, որով կուզէ մեր եկեղեցապատկան կալուածները գրաւել. աւելի լաւ մատակարարելու խաբուսիկ պատրուակին ներքեւ, որովհետեւ այդ կալուածները, նուիրուած յանուն հայ ազգին, ու բազմադարեան սեպհականութեամբ նուիրագործուած, կը պատկանին ամբողջ հայ ազգին։

Բ. Մեր անկեղծ համակրանքը կը յայտնենք յիշատակին մեր այն եղբայրներուն, որոնք արդար բողոքի մը արտայայտումին մէջ նահատակութեան արժանացան։

Գ. Մեր որդիական սրտագին յարգանքը և գքանչացումը կը յայտնենք Զերդ Ս. Օծութեան. կատարելապէս հիմնական կը գտնենք նորա հաստատամտութիւնը չստորագրելու համար ներկայացուած պաշտօնաթղթերը, ու մեծայոյս ենք որ ցմիշտ անդրդուելի մնալով անոր մէջ, իւր բարձրութեան վրայ պիտի պահէ հայ եկեղեցականութեան դիրքը, որ ընդհանուր ազգին արժանապատուութիւն է։

Ի Դիմաց Հրապարակային Ժողովոյ
Ազգայնոց Փ. Պօլսոյ

Ատենադպիր Ատենապետ
Պ. Թիզլաեան Երուանդ Քիւրտեան
20 Սեպտ 1903
Ֆիլիպէ

Տեր Խմբագիր
«Շարժումի» Էրզրում

Կը խնդրեմ, յանուն ճշմարտութեան և հրապարակագրի անաչառ անկողմնակալութեան հաճեցէք հրատարակել հետեւեալը։

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

«Իրաւունքի»ի 74դ. թիւրին մէջ Միսակ Մաղաքեան հերքում մը գրած էր Պ. Մ. Սեթեանի դէմ, զայն դկատաղած հրէշ և անբարոյականութեան անուանելով — անձնական հակառակութեանց արդիւնք եղած սոյն թշնամական արտայայտութիւնք հեգնական են. բայց հոն ակնարկութիւն մը ըրած էր ըսելով թէ «անոր սխրագործութիւնները» կարդացած ըլլալու եմ։

Սոյն ակնարկութիւնն անտեղի զտնելով հանդերձ կը յայտնեմ թէ հայ թերթերէ չատերը ընդունած եմ և կընդունիմ, սակայն երբեք կարդացած չեմ լուրջ գրութիւն մը որ զուրկ ըլլայ անոր անհատական արժանիքը խոթարել. բացի յարգելի ընթերցողներու տաղտուկ ազդող կարդ մը վայրաբանութիւններէ և ապա. թշնամանաց չարք մը. այսու ըսել կըլլայ հալածումը միայն արժանաւորաց է որք վերջապէս կը յանգին յաղթանակի։

Պ. Մ. Սեթեան, դպրավանուց վաղեմի աշակերտն՝ իւրովանն օգտակար հայուն և ընկերին՝ որպէս հրապարակագիր բաղդատութեան դնել՝ Մ. Մաղաքեանի հետ, արժանապատութեան զգացումի դէմ մեղանչել է, մինչեւ երէկ բարեկամ և այսօր թշնամի. և գիտէք ինչու՞ — խնդրուած դրամական փոխատուութիւն մը մերժուած ըլլալուն համար, այս է ամենը։

Սխալ է նաեւ Թաթէոս Մինասէեանի տուած հերքումը, վանզի փոխանակագիրը կորսնցնելու երկրորդ օրը մեզ եկած և Միսակ Մաղաքեանի կողմանէ գողցուած ըլլալը յայտնած և կասկածելով որ պարտատիրոջ ծախած է զայն, դրամը չկորսնցնելու միջոցներու վրայ խորհուրդ հարցուց. կարեկցելով Թաթէոսի վրայ, կորուստը տեղւոյն պաշտօնական թերթերու մէջ ծանուցուեցաւ փոխանակագրին արժէքէ զուրկ ըլլալը որուն քով ալ գտնուի։

Զարմանալի և անորակելի նկարագիր մեր մէջ. նախ խոստովանիլ և ապա ուրանալ։(*)

Յ. Պիպէրեան

Սեպտ. 22/6 Հոկտ. 903
Պուքրէշ

ԺՕՐԷՍԸ ԵՒ ՅԱՐԸ

Մեր ընթերցողները գիտեն արդէն որ եւրոպացի սոցիալիստները պատրաստվում էին Յարի Հռոմ եկած միջոցին ցոյցեր անել նրա դէմ, պատճառ բռնելով որ նա այն ոչիմիի գլխաւորն է, որը տանջում է Ռուսներին ու այն թագակիրը, որը Սուլթանին քաջալերում է հայերին և մակեդոնացիներին ջնջելու գործում։

Այժմ Ժորէս հրապարակով հաւանում է իտալացի սոցիալիստների հրատարակած կոչին, որ մի պարսաւագիր է Յարի համար. բայց չի հաւանում ցոյցեր անելուն, բացատրելով որ իտալացի սոցիալիստները Վիլհէլմի, Գերմանացւոց կայսեր Իտալիա եկած միջոցին այդ տեսակ ցոյցեր չարին, թէեւ, Ժորէսի կարծիքով, Վիլհէլմ մակեդոնական եւ հայկական ինդիրների վերաբերմամբ աւելի յանցաւոր է քան Յարը, որովհետեւ յայտնապէս Սուլթանի բարեկամն է և քրիստոնեաներին ջնջելու յայտնի դրդողը։

Մեր կարծիքով թէ Վիլհէլմ և թէ Յարը նոյն չափով պատասխանատու են ճնչված ժողովուրդներիս հանդէպ։ Եւ եթէ իտալացի սոցիալիստները մոռացել են կամ ուրիշ պատճառներից դրդվելով Վիլհէլմի դէմ ցոյցեր չեն արել, այդ չի նշանակում թէ հիմա սիալված են Յարի դէմ արհամարական ցոյցեր պատրաստելով։

Իհարկէ շատ լաւ կը լինէր որ իտալացի սոցիալիստները Վիլհէլմի հանդէպ էլ նոյն դիրքը բռնէին, ինչ դիրք որ ուզում են բռնել Յարի հանդէպ, բայց որ այդպէս չեն վարվել, ինչու՞ նրանց վերջի քայլը դատապարտել։

Առ հասարակ եւրոպական ամենազատամիտ և բռնութեան դէմ մաքառելու կոչված դասակարգը, սոցիալիստները շատ պաղարիւնոտութեամբ են վերաբերվում դէպի Վիլհէլմի և Հարի նման թագակիրները, թերեւս մտածելով որ ամեն բան ժամանակի ընթացքում կը շտկվի. կոչնչանան թագակիր բռնաւորները եւ ի՞նչ հարկ կայ հիմայ այդ տեսակ պետական գլուխների հանդէպ չափազանցօրէն յուզվելու, գրգռվելու։ Մեր ջահիլ խելակորոյս ֆուազի սոսիալիստներից մէկն էլ որ իր գոնքիշոտական արշաւանքը դեռ չէ դադրեցրել Վարդօի դէմ, ծաղրում էր վերջինիս ռուս Յարի դէմ յայտնած զզուանքը։

Մենք վախենում ենք թէ մի գեղեցիկ օր սոցիալիստները՝ մանաւանդ երբ ազգային արժանապատուութիւնը իրենց ձեռքում միամիտներին խաբելու համար գործիք են դարձնում այն տիպերը, որոնց գոյութիւնը արդէն անպատուութիւն է հայի համար։

Ծ. Խ.— Սոյն բովանդակութեամբ ուրիշ պարոններ ալ գրած են սոյն խնդրի մասին. սակայն այս գրութիւնը հրատարակելով վերջ կուտանք խնդրին եւ ուրիշ պարոններէ ալ կը խնդրենք առհասարակ անձերով մեզ չզզուեցնեն, երբ նիւթ եղողները հանրային գործի մէջ չէ որ կը քննադատուին։

ւանդ մերոնք. իրանց տեսական զառանցանքների մէջ այնքան կը խրվեն որ կը մոռանան կեանքի դառն իրականութիւնը եւ ընդհանուր կը եանքի մեծ ոճրագործներին, ու այլ եւս պէտք չեն զգալ այդ ոճրագործներին տապալելու համար նպատակին շուտ հասնող միջոցներ փնտռել եւ ստեղծել։

ԾԱՑՐԱԳՈՅՆ ԱՐԵՒԵԼՔԸ

Նշանակեալ օրը անցնելէն յետոյ Ռուսները նորէն Մանչուրիան չը պարպեցին. այդ պատճառով ալ Ճաբոնը կը պատրաստուի Քորէան գրաւելու. և արդէն Քորէայի քով գտնուած կղզիներէն միոյն վրայ զօրք եկեցուցած է։

Եւրոպական թերթերը կը հաղորդեն որ Ռուսիան ալ կազմ ու պատրաստ կը գտնուի դիմագրաւելու Ճաբոնի և կը կարծուի որ Ֆրանսայի հետ նոր պայմաններ ալ կապած ունի. եթէ Անգլիա Ճաբոնի օգնէ, Ֆրանսա ալ Ռուսիոյ պիտի օգնէ։

Մէկ խօսքով սեւ ամպեր կը կուտակուին ծայրագոյն Արեւելքի մէջ և կարելի է երկու խոշոր պետութիւնները մեծ ընդհարում մը ունենան և այդպէսով պատճառ դառնան այն խոշոր պատերազմը յառաջ բերելու, որմէ ամբողջ քաղաքակիրթ մարդկութիւնը կը սոսկայ, կը սահմռկի։

Մեզի, հայերուս համար, ինչպէս և ամբողջ Եւրոպայի համար շատ հաճելի պիտի ըլլար որ Ճաբոն կարեւոր դաս մը տար Ռուսական միապետութեան և աւելի ուժգին ցնցէր անոր սիները։ Բայց նշաններ ալ կան որ Ռուսիա իր տիրապետութիւնը Մանջուրիոյ մէջ ամրացնելու համար կարելի է որ որոշ և զգալի զիջումներ ընէ Ճաբոնի Քորէայի մէջ. որովհետեւ ինք ալ կը զգայ թէ Ճաբոնի պէս յախուռն և բաւական պատերազմիկ ու պատրաստ ժողովուրդի մը հետ պատերազմած միջոցին դիւրաւ չը պիտի կրնայ գլուխ ելլալ։

Ամերիկա և Անգլիա աչքերնին չորս բացած կը դիտեն Ճաբոնը և Ռուսիան, անշուշտ մտածելով որ իրենք թերեւս կարենան պատառ մը փրցունել այդ կողմերը. Մօտիկ Արեւելքին մէջ հրդեհին համար պատրաստուած կայծերը մարելու ճիգերուն միջոցին, թերեւս խոշոր հրդեհը ծայրագոյն Արեւելքի մէջ բռնկի։

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ընդդիմադիր կուսակցութեան պետերը Ռուսճուքի մէջ եւս ճառեր են. բարեբաղդաբար այս անգամ անկարգութիւններ չեն եղած, որովհետեւ կառավարութիւնը կանխապէս խիստ միջոցներ ձեռք առած է կարգը խանգարողները զսպելու համար։ Ընդդիմադիր կուսակցութեան պետերը առանձին ծրագիր մը չեն ներկայացներ երկիրը կառավարելու համար. և միայն ներկայ կառավարութեան վրայ կը յարձակին։

—Պոլսոյ գործակատարը Պ. Նաչովիչ Սուլթանի ուշադրութիւնը հրաւիրեր է Կարամանիայ գիւղի քով թուրք զօրքերուն պուլկար սահմանը խուժելու վրայ։ Թուրք կառավարութիւնը քննիչ յանձնախումբ մը ղրկեր է այդ գործը քննելու։ Սուլթանն ալ իր անձնական թիկնապահներէն մին նոյն նպատակով ղրկեր է սահմանագլուխ։

—Մինչեւ օրս կառավարութիւնը 92 գիւղապետութիւններ ցրուեր է։

—Ռատոստալավիստներու կուսակցութիւնը ներկայ ընտրութիւններու միջոցին առանց ոեւէ կուսակցութեան հետ միանալու անկախօրէն իր թիկնածուները պիտի ներկայացնէ երնսփոխան ընտրելու համար։

Պուլկար կառավարութիւնը Թուրքիոյ սահմանակից գաւառներուն մէջ զինուորական դրութիւն յայտարարեր է, որպէսզի կարենայ խստիւ հետեւիլ Մակեդոնիա անցնող պուլկարները։

—Նշանաւոր ապստամբապետ գնդապետ Եանքով «Վէյերնա բօշթա» թերթին կը գրէ որ Նամօքվա կայանին քով տեղի ունեցած ընդհարման միջոցին իր հերոսներէն մին 2 նաբոլիոն ըստակ գտեր է և քանի մը ալ արծաթ դրամներ, որոնք, ըստ երեւոյթին կը պատկանին փախստական կնոջ մը։ Այդ ստակները յանձնուած են Ռիլի վանքին վանահօրը և կորսնցնողը կրնայ անորմէն պահանջել։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

«Ն. Ֆ. Բրէսս» թերթը Պոլսէն կիմանայ որ Սուլթանը որոշած է ընդդիմանալ Ռուսիոյ և Աւստրիոյ եթէ անոնք պահանջեն որ անոնց հիւպատոսներուն բարենորոգումները ներմուծելու համար հսկիչներու պաշտօնը յանձնուի։

—Պոլսէն կը հաղորդեն որ Մակեդոնիոյ ապստամբները ճնշելու համար նշանակուած զօրքերուն վրայ նոր վեց վաշտեր ալ աւելցուցեր են։

—Բրիզրէնի սանճաքի ալպանացիները ըմբոստացեր են, որովհետեւ կառավարութիւնը նոր հարկ մը դրեր է։ Լիմաէն գայմագամը դուրս վռնտուած է։ Կը հաղորդեն նաեւ որ ալպանացի պետերէն մին՝ Սիլէմանը իր համակիրները կը ժողվէ թուրք իշխանութիւնները Տիրաքվաէն դուրս վռնտելու համար։

—Կը հաստատուի նաեւ որ ալպանացիները սպաներ են Շէմզի փաշայի թիկնապահ սպաներէն մին և յարձակեր են ջոկատ մը զօրքի վրայ, որ եօթը փախստական ալպանացի զինուորներ կը տանի եղեր։ Վիրաւորեր են սպայ մը և սպաներ են զինուոր մը։

—Ադրիանապօլսէն կը հաղորդեն որ այդ տեղին թէ քաղաքական և թէ զինուորական իշխանութիւնները Սուլթանական իրատէ մը ընդունած են, որմով իրենց կը հրամայուի մեղմօրէն վարուիլ պուլկար ժողովրդին մանաւանդ կանանց և երեխաներուն հետ։

Զօրքերուն բնակութեան համար տեղի պակասութեան պատճառով Ադրիանապօլսոյ զօրքերուն մէկ մասը քաղաքացիներու տներուն մէջ պիտի տեղաւորուին։ Այդ պատճառով ալ քաղաքացիները մեծ անհանդստութեան մէջ են, որովհետեւ զօրքերուն մէջ անկարգապահութիւն կը թագաւորէ։

ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

«Թան» կը հաղորդէ, վերապահութեամբ, իբր թէ Մակեդոնական ներքին կազմակերպութիւնը հնազանդելով թէ պուլկար կառավարութեան և թէ քանիմը հիւպատոսներու խորհուրդներուն, մանաւանդ անգլիական հիւպատոսի, որոշած է մօտերս դադրեցնել ապստամբական գործունէութիւնը։ Այս խաղաղասիրութիւնը հետեւանք է ձմրան մօտենալուն, որ շատ խիստ է Մակեդոնիոյ մէջ։

—Նոյն թերթին կը հաղորդեն որ Գրիւմրինդա գիւղին մօտերը, Սելանիկի նահանգին մէջ, թուրք զօրքերը մեծ ընդհարում ունեցեր են ապստամբներուն հետ և երեք հարիւր մարդու կորուստ տուեր են։ Կը յայտարարուի թէ այժմ 20,000 թուրք զինուոր զբաղուած է Ռազլոկի գաւառին մէջ ապստամբութիւնը խղդելու գործով։ Իսկ ապստամբներուն թիւը, որոնք շատ մը խումբերու բաժնուած են 8000ի կը հասնի։

—Վիէննայէն «Թան»ի կը հաղորդեն որ պետութիւնները Թուրքիայէն չը պիտի պահանջեն որ Մակեդոնիոյ համար քրիստոնեայ կառավարիչ նշանակուի, և պիտի գոհանան թուրք կառավարիչով մը։ Սակայն այդ բարձր պաշտօնեային պիտի ալ կցի միջազգային հսկիչ յանձնախումբ մը։ Դեռ եւս որոշուած չէ թէ այդ հսկիչ յանձնախումբը ինչ ձեւով պիտի կազմուի։ Արդեօք միայն Աւստրիոյ և Ռուսիոյ ներկայացուցիչներէ՞ն, թէ միւս պետութիւններն ալ այդ յանձնաժողովին մէջ ներկայացուցիչներ պիտի ունենան։ Ռստոկանապետի պաշտօնը պիտի յանձնուի թուրք պետութեան մէջ ծառայող եւրոպացի սպայի մը։ Պետութիւնները պիտի պահանջեն նաեւ որ անկանոն զօրքերը ետ կանչուին։ Այս փոփոխութիւնները բարենորոգմանց ծրագրին մէջ իբր թէ Անգլիական կառավարութեան պահանջով եղած են։

ԱԶԴ

Կը յայտարարենք Վառնայի և ուրիշ քաղաքներու մէջ գտնուած ընթերցողներու որ ընթերցարանիս մէջ կը ծախուին հետեւեալ գրքերը և պատկերները։

ԳՐՔԵՐ

Դիւցազնօրէն	1. Ֆր.
Ազատութեան ճանապարհին	Ա. 30
» »	Գ. 30
Ամբոխային տրամաբանութիւն	.55
Ապստամբ Սասունը	.20
Հայրենասէրի տաղերը	.20
Հերոսը	.20
Հայուհիներին	.20
Ազատ երգեր	.20
Մեծ առաւօտը	.50

ՊԱՏԿԵՐՆԵՐ

Պետօ (Պուլկ.) փոքր.	.10
Կարօ (Ա. Զօրեան) մեծ.	.50
Նշանաւոր հայ դէմքեր	1.—

Ուրիշ քաղաքէ եկած յանձնարարականները փութով կը կատարուին և գնողներու դիւրութեան համար Պուլկ. նամակագրօշմ ևս կ'ընդունուի։

Մօտ օրէն կը հասնին նաև «Պետոյ» (Պուլկ.), «Բարկէն-Սիւնի»ի, «Աղբիւր-Սերոբ»ի և «Պետոյ»ի (Վանեցի) մեծ պատկերները։ 20 Սնդ. հատը։

Վարչութիւն

10 Սեպ. Վառնա «Բարկեն-Սիւնի» Ընկ. Վառնայի

ՄԱՍԻ ՆԵՐԿ
ՀՐԱՇԱԼԻ ԾԱՋՈՂՈՒԹԻՒՆ
Դիմել Գ. Ա. Զարպհանեանի
Վառնա Պուլկարիա)

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна